ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Էդգար Էդիկի Ալեքսանյանի «Հայաստանի Հանրապետության կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրները կոալիցիոն կառավարության պայմաններում» վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ

Կուսակցությունները և կուսակցական համակարգերը կարևոր դերակատրություն ունեն ժողովրդավարական պետությունների արդյունավետ կառավարման համար: Ճիշտ ընտրված և կայացած կուսակցական համակարգի գործառումով են պայմանավորված և տվյալ պետությունում քաղաքական գործընթացները և օրակարգերի ձևավորումը և թե քաղաքական համակարգում իշխանության բաշխման ռացիոնալ մրցապայքարի վարումը: Միաժամանակ, քաղաքական մասնակցության և մրցակցության ներդաշնակությունը ապահովելու համար էական են կոալիցիոն կառավարումն և իշխանության համամասնական բաշխումը: Ներկայացուցչական ժողովրդավարություններում, սովորաբար, կուսակցությունների գոյությունը քաղաքական համակարգի անքակտելի մասն է համարվում: Քաղաքականության մշակման և վարման առումներով կուսակցությունների կանոնադրությունները ու պետություններում գործող ենթաօրենսդրական ակտերը վճռորոշ նշանակություն ունեն քաղաքական համակարգի արդյունավետ գործառման և այդ կուսակցությունների գործելաոճը ժողովրդավարական սկզբունքներին համապատասխանեցնելու համար: Սա ներառում, բայց չի սահմանափակում քաղաքական մասնակցության, բազմակարծության, կոալիցիոն կառավարման հարցերը: Մի շարք պետություններում կուսակցությունների արդյունավետ գործունեությունը պայմանվորված է տարբեր գործոններով, որոնցից են՝ կուսակցությունների

ձևավորման գաղափարախոսական հիմքերը, արտաքին ու ներքին սպառնալիքների գնահատումը, կուսակցությունների ընդլայնման աշխարհագրական և աշխարհաքաղաքական օրինաչափությունները, ինչպես նաև կազմակերպչական և ինստիտուցիոնալացման խնդիրների լուծումը: Օրինակ, հետխորհրդային պետություններից շատերում կուսակցությունների ձևավորման դժվարություններն արտացոլում են խորհրդային ժառանգության թողած գաղափարական հետևանքները, ինչն ապացուցել է, որ այն զգալի խոչընդոտ է կուսակցությունների ձևավորման և կայացման գործում: Ավելին, հետխորհրդային պետությունների կուսակցությունների զարգացման հեռանկարները վերլուծելու համար անհրաժեշտ է դիտարկել ինչպես պատմաքաղաքական, այնպես էլ ինստիտուցիոնալ առումները: Պատահական չէ, թե որոշ գիտնականներ պնդում են, որ Ռուսաստանում և հետխորհրդային այլ պետություններում (մասնավորապես ՀՀ-ում) բազմաթիվ կուսակցությունների ի հայտ գալը պարզապես կուսակցական առաջնորդների համակիրների խմբային հավակնությունների դրսևորում էր, ինչը հասարակության ընկալումներում համապատասխան քաղաքական անհրաժեշտություն և գիտակցություն չուներ: Ուստի, պետության արդյունավետ կառավարման առումով ավելի կարևոր հանգամանք է ոչ թե կուսակցական տիպի ձևական ընտրությունը, այլ որպես համակարգի դրա կայացումը: Օրինակ, ՀՀ դեպքում տարբեր փորձագիտական հանրույթների ներկայացուցիչներ, խոսելով բազմակուսակցական համակարգի կայացման անհրաժեշտության մասին, այն ներկայացնում են իբրև ամենակարևոր հիմնախնդիրը որ պետք է կարգավորել: Մինչդեռ, պետության արդյունավետ կառավարման գործում կարևոր է ոչ թե կուսակցական տիպի ձևական առկայությունը, այլ դրա, որպես քաղաքական ինստիտուտի արդյունավետ գործառումը:

Ատենախոսական աշխատանքը ձևակերպված է ակադեմիական ոճով, աշխատանքը կառուցվածքայնորեն բաժանված է գլուխների և ենթագլուխների, որոնցում համապատասխանաբար քննարկվում են տվյալ թեմաներին առնչվող գիտակիրառական նշանակության տարբեր խնդիրներ:

Այնուամենայնիվ, Է. Ալեքսանյանի ներկայացրած **«Հայաստանի Հանրապետության կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրները կոալիցիոն կառավարության պայմաններում»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունն ունի որոշակի խնդիրներ, որոնք նկատառելը էականորեն կբարձրացնի աշխատանքի հետազոտական արժեքը: Դրանցից հատկանշական են՝

1. Ատենախոսության մեջ կիրառված հայերեն մասնագիտական տերմինների մեծ մասը լրացուցիչ ճշգրտումների կարիք ունեն: Ավելին որոշ հատվածներում դրանց համադրությունը հաճախ խնդիրներ է առաջացնում մասնագիտական տեքստի բովանդակության ճիշտ ընկալման և հետազոտության որոշակիացման առումով: Թերևս ավելի նպատակահարմար կլիներ եթե հետազոտական աշխատանքի հեղինակը ընտրված տերմիններն այնպես համադրեր, որպեսզի հետազոտության հիմնական դրույթների ընկալումը ոչ թե արհեստականորեն դժվարանար, այլ մասնագիտական արժեքավոր բարդ դատողությունները ներկայացվեին պարզ ձևով:
2. Հետազոտության նպատակը ներկայացված է բավական երկար շարադրանքով, որի հետևանքով օգտագործված մասնագիտական տերմինների հայերեն փոխարկումը որոշակիորեն անհասկանալի է դարձնում հետազոտության բուն նպատակը: Ավելին, ատենախոսը հետազոտության նպատակի երկար շարադրանքում մի քանի անգամ ներկայացնում է, թե ուսումնասիրել է այս կամ այն թեմատիկ գործընթացը, մինչդեռ դա ավելի շատ առնչվում է հետազոտության խնդիրների տրամաբանությանը:
3. Գիտական նորույթների վեցերորդ կետը, ուր ատենախոսն անդրադառնում է ժողովրդավարական անցման, փափուկ ուժի և խելացի ուժի ուսումնասիրություններին, թվարկվածները որպես գիտական նորույթ ներկայացնելը խիստ վիճելի են, քանի որ պահանջում են համապարփակ հետազոտությունների իրականացում և հիմնավորում (էջ 14):
4. Երրորդ գլխի վերնագիրը և համապատասխան ենթագլուխները (էջ 114-154) որոշակիորեն խզված են թեմայից և դրա ընդհանուր տրամաբանությունից: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը փորձեր անդրադառնալ ՀՀ-ում

կուսակցական համակարգի կայացման և ինստիտուցիոնալացման խնդիրներին՝ դրանք դիտարկելով կոալիցիոն կառավարության պայմաններում:

Այսպիսով, Էդգար Էդիկի Ալեքսանյանի **Հայաստանի Հանրապետության կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրները կոալիցիոն կառավարության պայմաններում»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերոնշյալ թերությունները բնավ չեն ստվերում սույն աշխատանքի գիտական արժեքը, և ատենախոսը արժանի է ԻԳ.00.02 – քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ մասնագիտացմամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՎԱԳ ԳԻՏՆԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ **Ն. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոս Նարեկ Հրանտի Գրիգորյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ **Զ. Դ. ԱՍԱՏՐՅԱՆ**

06.12.2023 թ.